1920Ի ՇՈՒՇԻԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ՀԱՄԱՐ

Տ. ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ ԱՍՐԵԱՆ
monk-deacon@mail.ru

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի պատմութեան ընթացքում Ի. դարի յատկապէս առաջին տասնամեակները ամենաբարդ ու մռայլ շրջաններից են: Յեղափոխական շարժումների, ազգամիջեան բախումների, Առաջին Աշխարհամարտի, օտար պետութիւնների քաղաքական շահերին պարբերաբար զոհ գնալու ողբերգական հետեւանքները հայութեանը բերեցին նորանոր անլուր զրկանքներ, տեղահանութիւններ, գաղթ եւ հայրենազրկում, կոտորածներ ու ցեղասպանութիւն, մարդկային, տարածքային, հոգեւոր ու նիւթական արժէքների հսկայական եւ մեծամասամբ անվերականգնելի կորուստներ: Այդ տասնամեակները ծանրագոյն փորձութիւններով լի տարիներ էին նաեւ արցախահայութեան համար, փորձութիւններ, որոնք առաւել ծանրացան 1918ին եւ իրենց գագաթնակէտին հասան 1920ին: Թուրքիայի համաթուրքական ու համիսլամական քաղաքականութեան օժանդակութեամբ ձեւաւորուած եւ նաթի գործօնի շնորհիւ սեփական շահերն առաջ տանող կովկասեան թաթարների նորաստեղծ Ադրբեջան պետութիւնը զաւթողական նկրտումներ ի յայտ բերեց պատմական հայկական մի շարք երկրամասերի, այդ թւում եւ Արցախի հանդէպ:

Ինչպէս յայտնի է, ցարական Ռուսաստանում վարչատարածքային բաժանումը կատարուել էր ոչ-էթնիկ յատկանիշներով՝ «բաժանիր եւ տիրիր» սկզբունքի կիրառումով, թոյլ չտալու համար իր գերիշխանութեան ներքոյ գտնուող ազգերի միաւորումն ու անջատողական տրամադրութիւնների ի յայտ գալը: 1917ին ռուսական կայսրութեան փլուզումից յետոյ էլ մինչեւ 1918ի Մայիսի աւարտին Անդրկովկասեան Սէյմի արձակումը, Արցախը մտնում էր Ելիզաւէտպոլի նահանգի կազմի մէջ: Ադրբեջանի կառավարութիւնն այս պայմաններում հռչակեց Բաքուի եւ Ելիզաւէտպոլի նահանգները նորաստեղծ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետութեան կազմի մէջ մտցնելու մասին: Ադրբեջանն այդպիսով ձգտում էր բռնազաւթել Հայաստանի պատմական տարածքները՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը, որտեղ գերակշռում էր հայ բնակչութիւնը: Ադրբեջանն իր զաւթողական ծրագրերը նախ փորձում էր կեանքի կոչել Թուրքիայի օգնութեամբ: Սակայն 1918ի Հոկտեմբերի 31ին Թուրքիան ճանաչեց կրած պարտութիւնը Ա. Աշխարհամարտում եւ ստիպուած եղաւ ետ քաշել իր զօրքերը նաեւ Այսրկովկասից: Արդէն Դեկտեմբերին նրանց տեղը գրաւեցին բրիտանացիները, որոնք էլ բացարձակ տէր ու տիրական դարձան տարածաշրջանում: Ադրբեջանի կառավարութիւնը այս անգամ էլ փորձեց

նրանց օգնութեամբ նուաճել Արցախը: Բաքուի նաւթին տիրանալու եւ Ադրբեջանը հակառուսական յենակէտի վերածելու ծրագրերով տարուած բրիտանացիք լիակատար աջակցութիւն էին ցուցաբերում Ադրբեջանի զաւթողական քաղաքականութեանը: Սակայն Մայր Հայաստանին միաւորուիլ ձգտող արցախահայութիւնը 1918-20ին օրհասական պայքար մղեց պահպանելով փաստացի անկախ կարգավիճակ. «*Ադրբեջանի խանբէկական, մուսաւաթական կառավարութիւնը 3-4 տարուայ ընթացքում բազմաթիւ եւ բազմապիսի միջոցների դիմեց՝ իրեն ենթարկելու մի բուռ ըմբոստ... ժողովրդի՝ արհամարհելով նրա ազգային արժանապատուութիւնը... սակայն նրա ճիգն ու ջանքը ի դերեւ անցան*»[1]: Արցախահայութեան ութերորդ համագումարը (1920 Փետրուար 28-Մարտ 4) վճռականապէս մերժեց Ադրբեջանի գերիշխանութիւնն ընդունելու պահանջը եւ յայտարարեց, որ բռնութիւնների շարունակուելու պարագային դիմելու է ինքնապաշտպանութեան:

Ադրբեջանը վճռում է զէնքի ուժով վերջնականապէս գրաւել Արցախը եւ Զանգեզուրը: Ադրբեջանական կողմի պատրաստութեանն ի պատասխան հայկական կողմը որոշեց զինուած ապստամբութեան միջոցով կազմակերպել ինքնապաշտպանութիւն: Սակայն Հայաստանի Հանրապետութեան հիւծուած վիճակը, հայութեան մէջ միջկուսակցական ու միջանձնային տարակարծութիւնները, ապստամբութեան որոշ կազմակերպիչների անփորձութիւնը, համակարգուած ու համաձայնեցուած գործողութիւնների պակասը եւ մի շարք այլ գործօններ լրջագոյն խոչընդոտներ դարձան լիարժէք ինքնապաշտպանութիւն կազմակերպելու գործում: Մարտի 20ին արցախահայութեան դահիճ, «Ղարաբաղի գեներալ նահանգապետ» Խոսրովբէկ Սուլթանովը երեք օր պայմանաժամ է տալիս հայերին՝ զէնքը յանձնելու համար, որի մերժումն էլ դառնում է յարձակման առիթը:

Մարտի 22ի լոյս 23ի գիշերն սկսուեց Ադրբեջանի լայնածաւալ յարձակումը Արցախի եւ Զանգեզուրի հայութեան վրայ: Ողբերգական իրադարձութիւնների կիզակէտը դարձաւ հայկական Շուշին:

ՇՈՒՇԻԻ ԳՈՂԳՈԹԱՆ

Ինչպէս ամբողջ Արցախում, Շուշիում եւս ադրբեջանական յարձակումը նախապէս ամենայն մանրամասնութեամբ ծրագրուած ու պատրաստուած էր: Սուլթանովի որոշմամբ 1920 Մարտի 1ից Շուշիի բնակիչներին արգելւում է դուրս գալ քաղաքից: Ցուցակագրւում են բոլոր հայ սպաները, որոնք կարող էին գնալ շրջաններ եւ կազմակերպել ինքնապաշտպանութիւնը: Մահմեդական ամանորի՝ «նովրուզ բայրամի» տօնական շքերթին մասնակցելու պատրուակով Շուշի էին բերուել կանոնաւոր բանակի յաւելեալ զօրամասեր եւ թուրք-թաթարական ու քրդական զինուած հրոսակախմբեր: Նոյն օրերին Սուլթանովի հրամանով քաղաքի հայկական թաղամասերի կարեւոր դիրք ունեցող մի շարք տներում տեղաւորւում են ադրբե-

ջանական բանակի սպաներ՝ իրենց ենթակայութեան ունենալով երկուերեք զինուորներ: Լուցկի ու նաւթ էր բաժանուել մահմեդական բնակչութեանը՝ կոտորածն սկսելուն պէս հայերի տները հրդեհելու համար[2]:

Հայերին զինաթափելու համար Մարտի 22ին Սուլթանովի հրամանով զինուորական պահակներն սկսում են շրջել Շուշիի հայկական մասը եւ բնակարանները խուզարկել: Հենց այս խուզարկութիւնների ժամանակ էլ տրւում է կոտորածն սկսելու կայծը.

> Այսպիսի մի պահակ թուրք սպայի գլխաւորութեամբ ներս է խուժում մի հայ ընտանիք եւ պահանջում զէնքը: Տաքարիւն հայ երիտասարդի ներկայութեամբ թուրք սպան գոռոզ տոնով քստմնելի առաջարկութիւն է անում երիտասարդի գեղեցիկ հարսին եւ կամենում նրան ձեռք տալ: Երիտասարդը, չհանդուրժելով նման խայտառակութիւն, ատրճանակով տեղն ու տեղը գնդակահարում է սպային: Ասկեարները, ի պատասխան սպանում են երիտասարդին, նրա հարսին, մօրը, քրոջը եւ աղաղակներով դուրս ելնում, թրքական ուժերին հաւարի կանչում, թէ հայերը կոտորում են թուրքերին: Սկսում են հրաձգել հայերի տները եւ այդպիսով կոտորածը սկսւում է[3]:

Արխիւային վաւերագրերում, օրուայ մամուլում եւ ականատեսների ու ժամանակակիցների յուշագրութիւններում առկայ են բազմաթիւ վկայութիւններ, որտեղ ներկայացուած են Շուշիի մարտեան եղեռնագործութեան ահասարսուռ դրուագները: Առանց տարիքային ու սեռային տարբերութիւնների՝ կոտանքների են ենթարկւում, բռնաբարւում, գերեվարւում, սպանւում հազարաւոր հայեր: Թալանւում է հայերի ամբողջ ունեցուածքը, հրդեհւում եւ աւերակների են վերածւում հայկական թաղամասերը: Դարերով ստեղծուածը հաշուած ժամերի ընթացքում լիովին ոչնչացւում է:

Շուշիում տեղի ունեցածը 1915ին իր գագաթնակէտին հասած Հայոց Ցեղասպանութեան հերթական արիւնալի փուլն էր, որն ընդմիշտ փոխեց «հայկական փոքրիկ Փարիզի» ճակատագիրը՝ կասեցնելով նրա բնականոն զարգացումը:

Ողբերգական այդ իրադարձութիւններից շուրջ վեց տարի անց Շուշի այցելած Մարիէտա Շահինեանը սարսուռով է նկարագրում ուրուական քաղաքի վերածուած հայկական թաղամասերը.

> Առաջին բանը, որ ինձ ապշեցրեց, լռութիւնն էր: Այդպիսի սարսափելի, արհեստական լռութիւն ես երբեւէ չէի զգացել: Յանկարծ թւում է, թէ լռութիւնը մռթմռթում է. քարերը շնկշնկում են, շարժւում ու սսսափում են, եւ մազերդ բիզբիզ են կանգնում: 1920 թուականի Մարտին այստեղ երեք օրում աւերել ու կրակի են մատնել 7000 տուն, ու մորթել են՝ ոմանք ասում են 3-4 հազար հայ, ոմանք՝ 12 հազարից աւելի: Փաստ է, որ 35 հազար հայերից Շուշիում ոչ ոք չէր մնացել: Ինչ-որ տեղ առում դեռ կարելի է տեսնել կանացի մազափնջեր՝ լերդացած սեւ արիւնով պատուած: Երեւակայութիւն ունեցող մարդն այստեղ դժուար է շնչում. քայլում ես, քայլում, քայլում համատարած ածխացած շէնքերի շարքով, աւելի ճիշտ՝ պատերի կտորներով, շտապում ես, վախենում, թէ երբեք դուրս չես գայ[4]:

ԱՐՑԱԽԻ ԳԼԽԱՏՈՒԱԾ ԹԵՄԸ

Հայ Առաքելական Եկեղեցու պատմութիւնն ամբողջովին համահունչ է հայ ժողովրդի պատմութեանը: Յիրաւի, հայ ժողովրդի կեանքում արձանագրուած պատմական կարեւորագոյն իրադարձութիւններն իրենց ուղղակի դրսեւորումներն են ունեցել նաեւ Հայ Եկեղեցու իրականութեան մեջ: Բնականաբար բացառութիւն չէ նաեւ Շուշիի ցեղային մաքրագործումը, որի ընթացքում ծանրագոյն կորուստներ ունեցաւ Արցախի թեմը:

Կոտորածից օրեր անց մամուլում լուրեր յայտնուեցին, որ դաժանաբար սպանուել են նաեւ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տէր Գրիգորեանը եւ Շուշիի քահանաները[5]: Ապրիլի 16ին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղղուած իր զեկոյցում Ադրբեջանում Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Մարտիրոս Յարութիւնեանը, Շուշիի կոտորածի վերաբերեալ տեղեկութիւններ յայտնելիս, մէջբերումներ է կատարում իր տրամադրութեան տակ յայտնուած միքանի նամակներից, որոնց հեղինակները ոճրագործութեան անմիջական մասնակից թուրքեր էին: Նամակներից մէկում մասնաւորապէս ասւում է. «*Հազարից աւելի հայեր գերի բռնուեցին, տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչեւ անգամ աւետարանը, խալիֆին (եպիսկոպոսին), բոլոր մեծամեծ մարդկանց.... Նշանաւոր հայերին գլուխները կտրած բազարներում*[6] *պտտեցնել էին տալիս սպանելուց յետոյ*»[7]:

Շուշիի կոտորածի եւ եկեղեցականների կորուստների լուրերի իսկութիւնը հաստատում է նաեւ Գանձակի առաջնորդական փոխանորդ Լեւոն վարդապետ Պսէրեանը՝ Ապրիլի 21ին հոգեւորականներից մէկին ուղղուած իր նամակում, եւ յաւելում. «*Այստեղ երկար ժամանակ անհաւատ մնացինք այս տեղեկութիւնների հանդէպ, որոնք աւելի եւ աւելի յամառում են, համարելով դրանք պռովոկացիա*[8]՝ *Գանձակի շրջակայքի հայ գիւղերի զինաթափութիւնը դիւրացնելու եւ հայ ժողովուրդը խեղճացնելու նպատակով: Անձնապէս ինքս դեռեւս չեմ ուզում հաւատալ, մինչեւ իսկ մի ռուս պաշտօնեայ ինձ յանձնեց մի բանալի, ըստ երեւոյթին եկեղեցու, որը նա գտել է հայոց մասում եւ տեսել մի հայ քահանայի դիակ՝ ի շարս այլ սպանուածների*»[9]:

Շրջանառուող լուրերը խոր տագնապ են պատճառում Գէորգ Ե. ամենայն հայոց կաթողիկոսին: Վեհափառ հայրապետի հրահանգով հայրապետական դիւանը Ապրիլի 17ին նամակով դիմում է Վրաստանի թեմի առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին. «*Նկատի ունենալով, որ Դուք ըստ ամենայնի հնարաւորութիւն կ'ունենաք այդ տխուր լուրը ստուգելու՝ Նորին Սրբութիւնը հրամայեց դիւանիս գրել Գերապատուութեանդ ստուգելու ինչպէս այս, նոյնպէս եւ Շուշի քաղաքի կոտորածների լուրերը*

եւ իսկութիւնը, ամենայն մանրամասնութեամբ հաղորդել դիւանիս՝ զեկուցանելու Նորին Սրբութեանը»[10]:

Պատասխան նամակում Մխիթար սրբազանը յայտնում է. «*....ցաւ ի սիրտ՝ ամենախոնարհաբար զեկուցում եմ Ձերդ Սրբութեան, որ .... թուրքերը, վերցնելով Շուշին, աւերել եւ ոչնչացրել են քաղաքի հայկական մասը, կոտորելով առանց սեռի եւ հասակի խտրութեան մօտ 5000 հայ*[11], *որոնց թւում թեմական առաջնորդ Տ. Վահան սրբազան եպիսկոպոսին, որի գլուխը կտրելով բարբարոսաբար շրջեցրել են քաղաքում ի տես գազանացած խուժանի: Սպանուած են եւ բոլոր քահանաները, բացառութեամբ Տ. Գաբրիէլ*[12] *քահանայ Տ. Յովհաննիսեանի, որը բանտից փախչելով՝ մահուանից ազատուել է*»[13]:

Արցախի թեմական առաջնորդի եւ թեմի հոգեւորական ու աշխարհիկ ծառայողների սպանութեան, ինչպէս նաեւ թեմի կրած նիւթական կորուստների եւ այլ արհաւիրքների մասին առաւել ընդարձակ ենք գաղափար ենք կազմում թեմի կոնսիստորիայի[14] անդամ Կարապետ քահանայ Վարդապետեանցի եւ ատենադպիր Միրզա Տէր Սարգսեանի՝ Մայիսի 15ին ամենայն հայոց կաթողիկոսին ուղղուած զեկոյցից. «*Վահան եպիսկոպոսը սպանուեց առաջնորդարանում, չկամենալով դուրս գալ: Վահան եպիսկոպոսի սպանութեան մասին մեզանից յետոյ դուրս եկած հայ ոստիկանապետ Աւետիք Տէր Ղուկասեանը պատմում է, որ նոյն օրը երեկոյեան ժամը 10ին ինքը կարողացել է մտնել Սրբազանի մօտ եւ յայտնել, թէ այլեւս հնար չկայ մնալու, պէտք է կամ փախչել, կամ մի կերպ ընկնել Սուլթանովի մօտ: Սրբազանը պատասխանել է, թէ առաջնորդարան եւ կոնսիստորիա չեմ թողնիլ եւ չդուրս գալ, եւ ...յամառում է ու նստում*»: Կէս ժամ չանցած բարբարոսները ներխուժում են առաջնորդարան եւ դաժանօրէն սպանում Վահան սրբազանին եւ առաջնորդարանում գտնուող թեմական ծառայողներին ու նրանց ընտանիքներին: Ինքը՝ Աւետիք Տէր Ղուկասեանը, կարողանում է արդէն հրդեհուած առաջնորդարանի պատուհաններից մէկից ցած նետուել ու մի կերպ փախչել:

Զեկոյցի հեղինակները յայտնում են, որ կոտորածներին զոհ են գնացել նաեւ թեմական վարչութեան գրեթէ բոլոր անդամները.

> Կոնսիստորիայի կողմից սպանուած են՝ անդամ Խորէն Ա. Քահ. Իսկանդարեանը, կարգապահ Անանիա Տէր Դանիէլեանը եւ դիւանապահ Յովհաննէս Ղարաբէկեանը: Քահանաներից սպանուած է Յարութիւն Ա. Քահ. Վարդապետեանը, իսկ Գարեգին Ա. Քահ. Յովհաննիսեանն ազատուել է բանտից կիսամեռ դրութեան մէջ եւ միանգամայն մերկ. սպանուած են թեմ. դպրոցի տեսուչ Աղ. Ծատուրեանը, ուսուցիչ Գաբրիէլ Ղուլիքեւխայեանը, հոգաբարձու Անդրէաս բէկ Տէր Յարութիւնեանը, Ղուկասեան ուսումնարանի տեսուչ Բժ. Նիկողայոս Եարամիշեանը եւ այլն: Այսպէս ահա չկայ հոգեւոր վարչութիւն եւ մնացել ենք մի անդամ ու մի ատենադպիր, մերկ ու քաղցած, կոչուած է ժամանակաւոր մարմին գործերը վարելու[15]:

Քահանաներից մէկի սպանութեան մանրամասները նկարագրում է շուշեցի Զարեհ Մելիքշահնազարեանը՝ մէջբերելով կոտորածների դժոխքով անցած մէկ այլ շուշեցու՝ Տաթեւիկ ՏէրՍահակեանցի յուշերը: Վերջինս, ներկայացնելով գերեվարուած հայերի նկատմամբ իրագործուած ոճիրները, իր խօսքի շարունակութեան մէջ պատմում է.

> Այնուհետեւ սկսում են հաշուեյարդար տեսնել գերի տղամարդկանց եւ պատանիների հետ, որոնց նախօրօք կապկպել էին: Նրանց հերթով բերում էին կաշուէ գոգնոցով դահճի մօտ, որը, սուր դանակը ձեռքին, նստած էր աթոռին: Առաջինը նրա մօտ բերեցին գեղեցկահասակ երկարամօրուք քահանայ Տէր Յարութիւնին: Նրա ձեռքերը կապուած էին թիկունքին, ոտքերը՝ շղթայուած: Դահիճը նրան գցում է մէջքի վրայ, գլուխը դնում ծնկանը, յետոյ բռնում մօրուքը եւ ցուցադրաբար սուր դանակով ...: Յետոյ թուրքերը քահանայի գլուխը ցից են հանում եւ տանում քաղաքի թաթարական թաղամասի փողոցներով պտտեցնում[16]:

Հսկայական էին նաեւ Արցախի թեմի կրած նիւթական կորուստները: Կարապետ քահանայ Վարդապետեանցի եւ ատենադպիր Միրզա Տէր Սարգսեանի վերոնշեալ զեկոյցում ամփոփ կերպով ծանուցւում է. «*Առաջնորդարանը, թեմական դպրոցը, եկեղեցիները թալանուած են, ապա այրուած: Կռիւը սկսուելով առաւօտեան ժամը 5ին՝ հնարաւորութիւն չի եղել կոնսիստորիայից ոչ մի դոկումենտ, ոչ մի գործ ու գանձ ազատել, նոյնպէս եւ եկեղեցիներից*»[17]: Լիարժէք գնահատել հասցուած վնասը՝ պարզապէս անհնար է: Ամբողջ գոյքը, եկեղեցական պարագաները, արուեստի գործերը, գրականութիւնը, փաստաթղթերը կողոպտուել կամ ոչնչացուել են: Թէկուզ միայն այն փաստը, որ Շուշին 1830ականներից իվեր Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի հոգեւոր կենտրոնն էր[18], եւ այնտեղ բնականաբար կենտրոնացուած էր վերոնշեալ արժէքների մի զգալի մասը, որոշակիօրէն յուշում է, որ կորուստների չափերն իրօք բաւականին մեծ են եղել:

Ողբերգական այս իրադարձութիւնների հետեւանքով Հայ Եկեղեցու կրած կորուստների շարքում արձանագրուեց նաեւ եւս մէկ առանձնայատուկ կորուստ: Կուսանոցները Հայ Առաքելական Եկեղեցում հազուադէպ երեւոյթներ են: 1816ից Շուշիում գործում էր Կուսանաց Անապատը, որը Նոր Ջուղայի Ս. Կատարինէ եւ Թիֆլիսի Ս. Ստեփանոս վանքերի հետ միասին պահպանում էր Հայ Եկեղեցու կանանց մենաստանների մոռացուած աւանդոյթները: Այս ոճրագործութիւնների հետեւանքով վերջ դրուեց նաեւ բացառիկ այս երեւոյթի գոյութեանը[19]:

Այսպիսով, ամփոփելով վերոնշեալը, կարող ենք հաստատել թէ 1920ի Շուշիի ցեղասպանութեան հետեւանքով Արցախի թեմն ուղղակի գլխատուեց, ինչպէս բառացիօրէն (թեմական առաջնորդի եւ հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչների օրինակով), այնպէս էլ աւելի լայն,

փոխաբերական իմաստով: Շուշիի անկումը փաստացիօրէն նաեւ Արցախի թեմի հոգեւոր կենտրոնի ոչնչացումն էր:

ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Արցախի թեմի անդառնալի կորուստներն իրենց ծանրագոյն հետեւանքներն ունեցան թեմի յետագայ ճակատագրի վրայ: Հենց միայն թեմի առաջնորդի սպանութիւնը մեծ հարուած էր Արցախին ու նրա թեմին: Բարդագոյն ժամանակահատուածում (1916-20) թեմի հոգեւոր տեսչութիւնն ստանձնած Վահան եպիսկոպոս ՏէրԳրիգորեանը[20], զուտ հոգեւոր առաջնորդի իր կարգավիճակից բխող կարեւորութիւնից զատ, իր անձնական բարձր յատկանիշների եւ անսահման հայրենասիրութեան շնորհիւ մեծ հեղինակութիւն էր ոչ միայն եկեղեցական ասպարէզում, այլ նաեւ արցախահայութեան հասարակական-քաղաքական կեանքում: Լինելով Արցախը Մայր Հայաստանին միաւորելու ամենաեռանդուն ջատագովներից մէկը՝ սրբազանը կարեւորագոյն տարբեր գործընթացներում գործուն ներկայութիւն եւ առանցքային դերակատարում ունէր. բանակցում էր Ադրբեջանի կառավարութեան եւ անգլիական առաքելութեան հրամանատարութեան հետ՝ փորձելով ապահովել իր հոգեւոր հօտի անվտանգութիւնը, մասնակցում էր արցախահայութեան համագումարներին, ինքնապաշտպանական գործողութիւնների կազմակերպմանը, փորձում էր հարթել ներքաղաքական կեանքում տարակարծութիւններն ու պահպանել արցախահայութեան միասնականութիւնը եւն.[21]: Իսկ զուտ հոգեւորականի նրա կերպարը ժամանակակիցները բացառապէս մեծագոյն դրուատանքով են բնորոշում. «*եկեղեցասէր, դպրոցասեր, անաչառ եւ շիտակ պաշտօնեայ եկեղեցու եւ իր առաջնորդական կառավարութեան... վերին աստիճանի մաքրութեան եւ բարոյականութեան*» տէր եւն.[22]: Իսկ ժամանակակիցներից Եղիշէ Իշխանեանը յետագայում գրում է. «*Շատ համեստ մարդ էր Վահան Սրբազանը եւ յարգուած ժողովրդի կողմից... բարի, անբասիր վարքի տէր եւ եկեղեցուն նուիրուած մարդ*»[23]: Եւ, ըստ էութեան, հոգեւոր քաջ հովուի իր նկարագիրը Վահան սրբազանը պսակեց մարտիրոսական վախճանով՝ հրաժարուելով փախուստի կամ առաւել եւս Սուլթանովի ողորմածութեանն ապաւինելու միջոցով սեփական կեանքը փրկելու որեւէ փորձից:

Նման արժանաւոր առաջնորդից ու նրա կազմած թեմական վարչութիւնից զրկուելով՝ Արցախի գլխատուած թեմն անկարող գտնուեց դիմադրելու Ադրբեջանի հակահայկական ու հակաեկեղեցական քաղաքականութեանը: Նշեալ իրադարձութիւններից մէկ ամիս չանցած՝ Ապրիլի 28ին Ադրբեջանը խորհրդայնացուեց, իսկ մուսաւաթական պարագլուխները մի ակնթարթում վերածուեցին բոլշեւիկ յեղափոխականների: Սակայն այս գունափոխութիւնը որեւէ կերպ չփոխեց Ադրբեջանի հակահայկական զաւթողական քաղաքականութիւնը: Աւելին, այն, ինչ որ նախորդ

տարիներին յաջողուեց Ադրբեջանին Թուրքիայի եւ արեւմտեան երկրների (մասնաւորապէս անգլիացիների) ամենալայն աջակցութեան պայմաններում, ի կատար ածուեց Խորհրդային Ռուսաստանի օգնութեամբ. Արցախը բռնակցուեց Ադրբեջանին: Արցախի բռնաւիրացման հարցերի վերջնական լուծման համապատկերում Ադրբեջանի համար պակաս կարեւոր չէր նաեւ իր զաւթողական ծրագրերի համար իրական վտանգ ներկայացնող անձանց ու հաստատութիւնների չէզոքացումն ու ոչնչացումը: Ուստի բնական է, որ ադրբեջանական իշխանութիւնների համար իրենց ազդեցութեան ոլորտից դուրս՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից կառավարուող եւ ազգային-ազատագրական պայքարի օջախ լինելու փառապանծ աւանդոյթներ ունեցող Արցախի թեմը առաջնահերթ թիրախ էր դիտարկւում: Իսկ Խորհրդային Միութեան որդեգրած հակակրօնական ու հակաեկեղեցական պայքարն ուղղակի անսահմանափակ դաշտ էր բացում Արցախի թեմի նկատմամբ Ադրբեջանի սանձարձակ քաղաքականութեան համար:

Վահան սրբազանի սպանութիւնից յետոյ երկու տարի շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը չէր կարողանում Արցախում թեմակալ առաջնորդ նշանակել: Այդ երկու տարիների ընթացքում ադրբեջանական իշխանութիւններին յաջողուեց գրեթէ կազմալուծել Արցախի թեմը. արդէն 1922ին թեմի մեջ մտնող 159 բնակավայրերից 27ը չունէին եկեղեցի, քահանաներ ունէին միայն 39ը[24]: Համեմատութեան համար նշենք, որ 1914ի տեղեկագրի համաձայն Արցախի թեմն ունէր 222 գործող եկեղեցի եւ 188 քահանայ[25]: Վիճակագրական այս թուերը կտրուկ նուազեցին յատկապէս 1920ից սկսած:

1922 Մարտի 27ին Գէորգ Ե.ի հայրապետական տնօրինութեամբ Անանիա արքեպիսկոպոս Համազասպեանը[26] նշանակուեց Արցախի թեմի առաջնորդ: Դժոխային պայմաններում երկու տարուայ պաշտօնավարումից յետոյ եօթանասունամեայ առաջնորդը ստիպուած եղաւ 1924 Մայիսի 27ին հրաժարական ներկայացնել: 1925ին Գէորգ Ե. ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս ծայրագոյն վարդապետ (1928ից՝ եպիսկոպոս) Յակոբեանը[27] նշանակւում է Արցախի թեմի առաջնորդ: Չնայած Մայր Աթոռի եւ Արցախի թեմի առաջնորդի գործադրած հերոսական բոլոր ջանքերին՝ Ադրբեջանի իշխանութիւնների բռնութիւնները հասան իրենց գագաթնակէտին՝ հանգուցալուծուելով 1933ին Արցախի թեմի վերջնական փակումով[28]: Յետագայ տարիներին Արցախում հոգեւոր-եկեղեցական կեանքի վերականգնման բոլոր ջանքերը կտրականապէս կասեցուեցին Ադրբեջանի կողմից՝ ընդհուպ մինչեւ 1980ականների վերջ, Արցախը վերածելով Հայ Եկեղեցու եւ հոգեւորականութեան համար փակ տարածքի: Բազմաթիւ վանքեր, եկեղեցիներ ու մատուռներ կա՛մ լիովին ոչնչացուեցին կա՛մ էլ վերածուեցին կրթական-մշակութային նշանակութեան շինութիւնների, պահեստների,

անասնագոմերի ...: Առաւել յայտնի կոթողները «աղուանականացնելու» եւ «ադրբեջանականացնելու» աճպարարութիւններով յայտարարուեցին «ադրբեջանական յուշարձաններ»[29]: 1920ին աւերակուած Շուշիում այրուած ու թալանուած, բայց դեռեւս կանգուն մնացած եկեղեցիները յետագայ տարիներին աստճանաբար վերացան երկրի երեսից. իսպառ ոչնչացուեցին Ագուլեցուց եկեղեցին ու Կուսանաց Անապատը, Մեղրեցոց եկեղեցուց մնաց միայն խորանի հատուածը, որն ադրբեջանցիները վերածեցին բացօթեայ կինոդիտումների բեմի: Պղծուեցին նաեւ հրաշքով կանգուն մնացած երկու եկեղեցիները՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ (Կանաչ Ժամ) եկեղեցին ադրբեջանցիները հանքային ջրերի ըմպելասրահ էին դարձրել[30], իսկ հոյակերտ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ տաճարի կիրառման վերջին եղանակն իբրեւ զինապահեստ ծառայեցնելն էր:

Այսպիսով, կարող ենք հաստատել, որ 1920ի Շուշիի ցեղասպանութիւնը «սկիզբն էր երկանց», արիւնոտ այն ելակէտը, որով սկսուեց Ադրբեջանի կողմից Արցախի թեմի քայքայման եւ վերացման բուն գործընթացը:

ՇՐՋԱԴԱՐՁ

Ադրբեջանական բռնարարքների աւերիչ հետեւանքները թօթափելու եւ Արցախում հոգեւոր-եկեղեցական կեանքի վերականգնման հնարաւորութիւնն ընձեռուեց միայն արցախեան ազգային-ազատագրական պայքարի շնորհիւ: 1989ին Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետական տնօրինութեամբ վերաբացուեց Արցախի պատմական թեմը[31]: Իսկ 1992ին Շուշիի ազատագրումից յետոյ թեմակալ առաջնորդ Պարգեւ սրբազանի տնօրինութեամբ Արցախի թեմի առաջնորդարանը, 72 տարուայ հարկադիր բացակայութիւնից յետոյ, վերահաստատուեց Շուշիում: 2019ին Արցախի թեմը տօնեց վերաբացման 30ամեակը: Այդ 30 տարիները հոգեւոր վերածննդի, կորուստների վերականգնման եւ նոր արժէքներ ստեղծելու[32] տարիներ եղան: Իհարկէ, ինչպէս քանիցս արդէն նշեցինք, կորուստների մի զգալի մասն անդառնալի են, դրանց վերականգնումը, հասկանալի պատճառներով, անհնար է:

Ամփոփելով վերոնշեալը՝ հաստատենք, որ Ադրբեջանի (մուսաւաթական, խորհրդային, թէ յետխորհրդային) հետ թէկուզ համակեցութեան եւ արցախահայութեան ամենաբնական իրաւունքների, անգամ կեանքի, սեփականութեան, հաւատի եւ դաւանանքի ազատութեան իրաւունքների իրագործումն անհամատեղելի իրողութիւններ են: Աստուածատուր այդ իրաւունքների իրագործումը հնարաւոր է բացառապէս սեփական անկախ պետականութեան պայմաններում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Աբրամ Կիսիբէկեան, *Յուշեր, 1*, Երեւան, «Առասպել Ինդեքս», 2011, էջ 461:

[2] *Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, Գիրք Թ., Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի Թեմը (1813-1933 թթ.)*, կազմ. եւ առաջաբան.՝ Սանդրօ Բեհբուդեան, Երեւան, «Ոսկան Երեւանցի» Հրատ., 2001, էջ 813-14:

[3] «Ոճրապատում. Թէ Ինչպէս Սկսուեց Շուշու Կոտորածը», *Նոր Աշխատաւոր*, Թիֆլիս, 16 Ապրիլի 1920:

[4] Մարիէտա Շահինեան, *Խորհրդային Անդրկովկաս*, Գեղարուեստական Գրականութեան «Լենինգրադ» Պետական Հրատ., Մոսկուա, 1931, էջ 362 (ռուսերէն):

[5] «Ոճրապատում. Հայկական Ջարդերը Ադրբեջանում», *Նոր Աշխատաւոր*, 14 Ապրիլի 1920. նաեւ՝ «Ղարաբաղ. Շուշու Ողբերգութիւնը», *Մշակ*, Թիֆլիս, 9 Մայիսի, 1920:

[6] Շուկաներում:

[7] *Հայերի Կոտորածները Բաքուի եւ Ելիզաւէտպոլի Նահանգներում 1918-1920թթ., Փաստաթղթերի եւ Նիւթերի Ժողովածու*, պատ. խմբ.՝ Ամատունի Վիրաբեան, կազմ.՝ Սոնիա Միրզոյեան, Ալվարդ Ղազինեան, «Լուսաս» ՍՊԸ տպարան, Երեւան, 2003, էջ 459:

[8] Սադրանք:

[9] *Վաւերագրեր*, էջ 744-45:

[10] Նոյն, էջ 744:

[11] Զոհերի քանակի վերաբերեալ ժամանակակիցների վկայութիւններում տարբեր թուեր են նշուել, ինչի մասին վկայում է նաեւ Շահինեանը: Արխիւային մի վաւերագրում, որի տակ ստորագրել է Ադրբեջանի բանակի գլխաւոր շտաբի պետ գնդապետ Վեքիլովը, ասուած է, որ Մարտի 22ին Շուշիում սպանուել է 8000 մարդ (Հրանտ Աբրահամեան, *Մարտնչող Արցախը 1917-2000, Գիրք Ա, 1917-1923*, «Զանգակ-97», Երեւան, 2003, էջ 317): Յայտնի վիճակագիր Բախշի Իշխանեանի հաշուումներով միայն Շուշիում զոհուել է 8988 հայ (նոյն, էջ 186):

[12] Վրիպակ է, պէտք է լինի Գարեգին (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թթ. 15-16):

[13] *Վաւերագրեր*, էջ 749:

[14] Թեմական հոգեւոր մարմին՝ վարչական եւ դատական գործառոյթներով:

[15] Նոյն, էջ 747-48:

[16] Զարեհ Մելիք-Շահնազարով, *Ղարաբաղեան Հինուորի Գրառումներ (Լեռնային Ղարաբաղում 1918-20 թթ. Իրադարձութիւնների Մասնակցի Յուշեր)* Մոսկուա, 1995, էջ 43-44 (ռուսերէն):

[17] *Վաւերագրեր*, էջ 747:

18 Մելանիա Բալայեան, «Շուշիի Վերածումը Ղարաբաղի Հոգեւոր Կենտրոնի», *«Շուշին Հայոց Քաղաքակրթութեան Օրրան», Շուշիի Ազատագրման 15րդ Տարեդարձին Նուիրուած Գիտաժողովի Նիւթեր*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., Երեւան, 2007, էջ 70-78:

19 Հեղինէ Մկրտչեան, «Շուշիի Կուսանաց Անապատը», *«Շուշին՝ Հայկական Մշակոյթի Օջախ», Հայկական Գրատպութեան 500Ամեակին Նուիրուած Գիտական Կոնֆերանսի Զեկուցումներ*, «Կաճառ» Գիտական Կենտրոնի Հրատ., Շուշի, 2014, էջ 204-13:

[20] Ծնուել է 1845ին Մեղրիում: Ուսանել է Գէորգեան Ճեմարանում: Կնոջ մահուանից յետոյ մտել է վանք եւ 1887ի Ապրիլի 21ին ձեռնադրուել աբեղայ: Նոյն թուականի Յուլիսի 16ին ստացել է վարդապետական աստիճան եւ

նշանակուել Արցախի թեմի Նուխիի առաջնորդական փոխանորդ՝ դառնալով նաեւ Ս. Էջմիածնի սինոդի անդամ: 1913ի Փետրուարի 27ին նշանակուել է Տաթեւի վանքի վանահայր: 1916ի Ապրիլի 30ին նշանակուել է Արցախի թեմակալ: 1917ի Ապրիլի 16ին օծուել է եպիսկոպոս:

[21] Հրանտ Աբրահամեան, *Արցախահայութեան Հասարակական-Քաղաքական Կեանքը եւ Արցախի Թեմը (1901-1933)*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատ., 2009, էջ 165-99:

[22] *Վաւերագրեր*, էջ 626:

[23] Եղիշէ Իշխանեան, *Լեռնային Ղարաբաղ (1917-1920)*, «Հայաստան» Հրատ., Երեւան, 1999, էջ 140, 656: Հերթական անգամ յիշելով Վահան սրբազանին՝ Իշխանեանը խոր կսկիծով գրում է. «*....կրկին ու կրկին յիշեցի Ղարաբաղի անփառունակ ապստամբութիւնը, որի հետեւանքը եղաւ Շուշու հայկական մասի ծայրէիծայր հրդեհի ճարակ դառնալը ու հիմնայատակ կործանուելը եւ կրկին պատկերացրի, թէ ինչպէս է նահատակուել այն բարի ծերունին, այրուելով հրդեհուած հինաւուրց առաջնորդարանի շէնքում, որտեղ իր կացարանն էր*» (նոյն, էջ 657):

[24] *Վաւերագրեր*, էջ 759-66:

[25] *Արարատ*, Յուլիս, 1914, էջ 637:

[26] Ծնուել է 1847ին: 1859ին աւարտել է Ս. Էջմիածնի հոգեւոր դպրոցը: 1871ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ եւ հոգեւոր ծառայութեան նշանակուել Մոսկուայում: 1873ի Մայիսի 3ին ստացել է վարդապետական աստիճան: Մինչեւ 1875ի Մայիսի 14ը եղել է Երեւանի հայոց կոնսիստորիայի անդամ: 1877ի Յունուարի 31ին ծառայութեան է նշանակուել Նոր-Բայազէտի շրջանում: Մինչեւ 1887ը եղել է Տաթեւի վանքի վանահայրը, որից յետոյ հոգեւոր ծառայութիւնը շարունակել է վիրահայոց թեմում: Եպիսկոպոսական ձեռնադրութիւնից յետոյ առաջնորդ է եղել մի շարք թեմերում: Աաջնորդական վերջին ծառայութիւնը եղել 1922-24ին Արցախում: Վախճանուել է 1927ի Դեկտեմբերի 18ին՝ Էջմիածնում:

[27] Ծնուել է 1878ին Գաւառում: 1914ի Յունուարի 30ից եղել է Մայր Աթոռի գանձապահ, 1916ի Մարտի 18ից՝ Մայր Աթոռի տպարանային վարչութեան նախագահ, Յուլիսի 12ից՝ Մայր Աթոռի հիւրընկալ, Նոյեմբերի 9ից՝ վանական կառավարութեան նախագահ: 1917ի Մայիսի 30ից կրկին ստանձնել է Մայր Աթոռի գանձապահի պաշտօնը: 1925-33՝ եղել է խորհրդային շրջանում Արցախի թեմի վերջին առաջնորդը՝ կրելով բազում զրկանքներ ու հալածանքներ: Թեմի փակումից յետոյ էլ, հակառակ Խորէն Ա. Մուրադբէկեան կաթողիկոսի ու Մայր Աթոռի բոլոր ջանքերի, խորհրդային իշխանութիւնները թոյլ չեն տուել Վրթանէս սրբազանին եկեղեցական ասպարէզում որեւէ պաշտօն զբաղեցնել: Վախճանուել է 1943ին:

[28] Գարիկ սարկաւագ Ասրեան, «Խորհրդային Ադրբեջանի Բռնաճնշումները եւ Արցախի Թեմի Փակումը (1920-1933)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԶ.*, Պէյրութ, 2016, էջ 317-48:

[29] Տ. Ներսէս Քահանայ Ասրեան, «Արցախի Փակուած Թեմի Պատմութիւնից (1933-1988)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԷ.*, Պէյրութ, 2017, էջ 245-76:

[30] Շահէն Մկրտչեան, Շչորս Դպութեան, *Շուշի. Ողբերգական Ճակատագրի Քաղաքը*, «Գասպրինտ», Երեւան, 2008, էջ 30-32:

[31] Տ. Ներսէս Քահանայ Ասրեան, «Արցախի Վերաբացուած Թեմը Խորհրդային Միութեան Վերջին Տարիներին (1988-1991)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հատոր ԼԸ.*, Պէյրութ, 2018, էջ 509-28:

[32] Ամենավառ վկայութիւնը Ստեփանակերտի Ս. Աստուածամօր Հովանի փառահեղ մայր եկեղեցու կառուցումն է, որի օծման եւ բացման արարողութիւնը կատարուեց Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ 2019ի Ապրիլի 7ին՝ Արցախի թեմի վերաբացման 30ամեակի առիթով:

THE TRAGIC CONSEQUENCES OF
THE 1920 SHUSHI MASSACRES ON THE DIOCESE OF ARTSAKH
(Summary)

FATHER NERSES ASRYAN
monk-deacon@mail.ru

On the night of March 22-23, 1920, Azerbaijan carried out a large-scale, preplanned offensive against the Armenians of Artsakh and Zangezur. Shushi became the hotspot of these tragic events. The Azerbaijani regular army and a mob armed by the Azerbaijani authorities massacred large numbers of Armenians in Artsakh and its capital, the 35.000-strong Shushi. Thousands of Armenians were tortured, raped, mutilated and killed without distinction as to age or gender. At the end of the butchering between 5000 and 12,000 Shushi Armenians were killed, all Armenian property was looted, destroyed and set on fire. Indeed, life in the Armenian quarter of Shushi came to a tragic end with these massacres.

The Diocese of Artsakh also suffered immense losses due to these massacres. A report of 1914 states that the prelacy had 222 functioning churches and 188 priests. Since the 1830s, Shushi had been the spiritual center of the Diocese of Artsakh. All administrative offices, as well as the bulk of the cultural, spiritual and material heritage of Artsakh were concentrated in Shushi.

Both Bishop Vahan Ter-Grigorian, the primate of the Diocese of Artsakh, and the majority of the Diocese board members were brutally murdered, and church property was looted or set on fire.

Deprived of the church leadership and spiritual center, the Diocese of Artsakh found itself in an extremely vulnerable position. The Azerbaijani authorities embarked on their second step against Artsakh, consistently intensified their repressions, and ultimately, in 1933, closed the Diocese. Up until 1988, the Armenian Apostolic Church was banned in the territory of Artsakh.

Nonetheless, thanks to the national liberation struggle, church life was restored in Artsakh and the indigenous Artsakh Armenians resumed their religious activities after a forced stop of over five decades.